

8087

891.99

4-70

1884

189

1884

121

# ԱՐԵՄԻԹՈՒԹԻՒՆ

ԱՐԵԼԻ - 5 ԽԵՆ 1898

Կենտր. Բիութ.

Արմ. Եղանակ. Օպա.

ԵՐԵԲ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ.

ԱՐԱՏՎԱԼ ՅԱՐԱՐԱ ԱՄՍԱԳՈՅՑ.

## ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ

ՍԱՐԴԻՍ Բ. ԴԱՊԻՆԻ ՎԱՆԵՑԻ

## ՎԱՐԱՐԵԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒԳԻԿԵ ԷջՄԻԱԾՆԻ

1884 — Ա. Տ. Վ.

391.99  
4-70

12003

# Կ ՃՐԿԱ Ար Շաբաթական ԱՂԲԵՐՔՈՒԹԻՒՆ

9.73  
891.99

ԱՐԵԼԻ

184

4-70 ԵՐԵԲ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

Digitized by srujanika@gmail.com

ԱՐՏԱՏՊԵԱԼ ՅԱՐԱՐԱՏ ԱՄՍԱԳՐԸ

894  
1001

## ԱՐԴԱՏԱՎՈՒՐԵԱ

ԱՐԴԻՍ Բ. ԳՈՅԻՆԻ ԱՐԴԵՑ



## ՎԱՐԱՐԾԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԵԿԵ ԷՀՄԻԱԾՆ

1884-0319



ՅԱՐԱԳԱԲԱՆ.

5 ԽՈՆԻ 1893  
ՑԵՆՏՐ. ԵՎ. Ա. Ա. ԲԼԱՐ.

Եթէ թատրոնն ընդունվումէ իբրև նախակրթարան հասարակաց՝ անշուշտ նորանում ներկայացնելու նիւթն և առարկան պէտք է ունենայ գէպի բարզյականութիւն յորդորող միակ նպատակ, որի մէջ իբրև պարզ հայելի՝ իւրաքանչիւր ոք տեսնի իւր անցեալն, ներկայն և ապագայն. մոլին իւր մոլութիւն տեսնի ու գարշի զզուանքով և առաքինին՝ իւր ուղղութեան մէջ իւրախուսուիւր:

Թատրոնի օգտակարութեան առմիւր արդեն պատեհութիւն ունեցել եմ փոքր ինչ ընդարձակ գրելու անցեալ թուց Արարատայ մէջ, այժմ կրկնաբանել աւելորդ համարելով՝ մի համառօտ ծանօթութեամբ այս փոքրիկ աշխատասիրութեան մասին՝ կը վերջացնեմ խօսք:

Սողօմնն Կեսների ի մահ Աբելի ընտիր ու կրթական բանաստեղծութիւնն գրեթէ եւրոպական բոլոր ազգեր ժարգանած են իւրեանց լեզուով, և լոյս աշխարհ հանած տպագրութեամբ. Հայ ընթերցասէրը ևս բաղդ ունեցել են ի շնորհս Աննետիկի Մխիթարեան միաբանութեան քանից տեսնել ու վայելել նորա կրկնակի հրատարակութիւնն:

Այս ընտիր և լազմակողմանի կրթական գրուածքն թատրական բեմի վերայ տեսնելու շատերի փափազն ի նկատի ունելով՝ սորանից 15 տարի յառաջ աշխատեցի գրաբառից աշխարհաբառի վերածել թատերական ձեռվ. զոր և մի քանի անգամ Վանայ մէջ ներկայացնելու բաղդն ևս ունեցայ. այժմ ևս բարեկամներիս յորդորանքով համարձակուեցի լոյս աշխարհ հանելու՝ խոստովանելով միանգամայն՝ որ Կեսների այս պատուական բանաստեղծութիւնն թատերգութեան ձեհ վերածելու համար աւելի ճարտար գրչի և հմուտ թատերգուի կարօտ էր:

Ընթերցողը կըտեսնի որ ես աւ ելի նմանող (հետեւող) եղած եմ Կեսներին քան թէ թարգմանող շատ սակաւ անգամ հեղինակի իսկական խօսքերը մէջ եմ բերել և այն ես դարձուած-ներով, համառօտելով և կամ ընդլայնելով. և վստահ եմ որ ամեն ոք ներողամիտ կըլինի ինձ, երբ նկատէ որ ես երբե-մըն կամաւ շեղած եմ բնադրի ընթացքից ըստ պահանջ-ման հարկին՝ կամ յաճախ ակամայ թերութեան մէջ ըն-կած՝ թատերական զրուածոց և ներկայացնելու եղանակին քաջ հմուտ չըլինելովս և կըպահանջէ շատ ունեւորից շատ, իսկ սակաւէից՝ սակաւ:

U.2

ԳՈՐԾՈՂ ԱՆՇԵՆՔ.

Urgent.

B. wj.

Կային.

Սիստեմի քայլ և կյան Կաթինի:

Upkt.

Філологія, педагогіка та методика викладання

Ենօք վեցամեալ, որդի Կայենի.

## Անամելէք սատանայ,

Թափայէլ Հրեշտակ.

Ա. գործողութիւնը կատարվումէ պարտիզի մէջ վարդենու տակ.

Բ. գործողութիւնը կատարվումէ մի հաստաբուն և սա-  
ղարթակիս ծառի տակ:

Գ. Գործողութիւնը կատարվում մի խոտաէտ դաշտի մէջ:  
Զգեստներ կը լինին միայն մաշկեղէն. կանանց գլխներն  
ծաղկապսակ:

## ՏԵՍԱՐԱՆ ԱՅԼՈՒԹԻՒՆ

— 15 ИЮНЬ 1892

ԱԲԵԼ ԵՒ ԹԻՐՁԱՑ

ԹԵՐՁԱՑ

Իմ սիրելի կենակից Աբէլ, աղաչումեմ, Եթէ քեզ ձանձ-  
րութիւն չէ, շնորհ արա երգել քո օրհներգն՝ փառաբանել  
Աստուծուն՝ ձայնակցելով այս քաջցրախօս սոխակին (սո-  
խակի ձայն է լսուում վարդենւոյ վերայ), Ա՛Հ, Բնչ ախորժ  
զգացմունք է տիրում սրտին՝ երգածդ ժամանակ:

ԱԲԵԼ

Իմ չքնաղագեղ լուսնեակ Թիրզայ, ինձ աւելի ախորժելի  
է կատարել քո ցանկութիւնը, մանաւանդ թէ պարտականու-  
թիւնս է միշտ օրհներզս կրկնել, որով և իմ խորին երախ-  
տագիտութիւնս յայտնել այն յաւիտենական Բարեղյն, որ  
այսչափ բարիք է շնորհել մեղ վայելելու. ահա խաշինքս  
կշտացած հանդիստ մակաղել են առուակի վերայ, ես երգեմ,  
դու ձայնակցիր ինձ. (Երգումէ).

Բուրումն սրտիս քեզ, ովք Տէլը \*)

Ելգէ յեթերսի նուեր

Նշոյլ լուսոյդ տուր մեզ դու

Քեզ միշտ լինիլ օրհներգու.

## ϢԸՑԻՆՔ, ԹԱՅՈՒՆՔ և ՃԿՈՒՆՔ

**Սողունք, խօսունք, չոգեշունչք**

Քեզ միշտ լինեն օրհներդու,

Երգեն սուրբ, սուրբ, սուրբ ես դու

(\*) Այս երգը առանց մասնի է

Զ.քեզ օրհնեն մեր լեզուք,  
Զ.քեզ գովեն բոլոր շունչք.  
Զորս կոշեցեր ի չըդոյէ դու  
Լինիլ եիդ օրհներգու:  
Զի քև երկինք գլխովին,  
Երկիր ողջայն՝ լոյս եկին.  
Որք զտիւն միշտ և գլշեր՝  
Զ.քեզ օրհնեն ի յեթեր:

Ընդ որս և մեք մոխիր հող,  
Ի մէջ փոշւոյս զքեզ օրհնող,  
Խնդրեմք ի քէն ձեռնառու  
Լինիլ եիդ օրհներգու:

### ԹԻՐՁԱՅ.

Ո՛չ, ինչպէս գեպ ի վեր է սրանում մտիս թոխքը,  
Քաղցրանուագ երգոյդ հետ օրհնել յաւիտենական բարին,  
որ զքեզ ինձ պարզեց՝ ինչպէս արեգակը՝ երկրին, և առուակը՝ բոյսերին. միշտ առանձնութեանս մէջ պիտի փառաբանեմ նորան ցնծալից արտասուօք:

### ԱԲԷԼ.

Քեզ նման և հօ, սիրելի դիմ թիրզայ, միշտ դոհութիւն  
նուիրել եմ և պիտի նուիրեմ նախախնամութեան, որ զքեզ  
ինձ համամիտ օգնական ու ընկեր սահմանեց, լուսնից պայ-  
ծառ, վարդից գեղեցիկ, գարունից զուարթ և գառից հլու:

### ԹԻՐՁԱՅ.

Ա՛չ, երանի թէ շրթունքս կարող լինէին պատմել քեզ  
սրտիս զգացմունքը և սիրոյս հաւաստիքը, որին չափ և սահ-  
ման չըկայ:

### ԱԲԷԼ.

Սիրելիդ իմ թիրզայ, սիրտ սրտիս հետ է խօսում, առանց  
լեզուիդ շարժմանց և շրթանցդ բարախմանց՝ սիրտս զգումէ

սիրոյդ ողբանութիւնը ( Ադամ ու Եւայ ծածկաբար զալիս  
են ծառի տակ և ունկնդիր են լինում ), և ես չեմ կարողա-  
նում պատմել սէրս, այսչափ միայն կարող եմ ասել որ, ես  
կըսիրեմ քեզ ինչպէս կեանքս, առանց քո ներկայութեան՝  
ցերեկն ինձ փոթորկալից գիշեր է թուում, գառներս իսկ  
զգալով սէրս՝ միշտ այն տեղերն են կամենում արածել և  
չըհեռանալ այն տեղից, ուր քո նազաձեմ ստներդ կոխիլ  
են. ( Ադամ և Եւայ մտնումեն ):

### ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԱԴԱՄ ԵՒԱՅ, ԱԲԷԼ ԵՒ ԹԻՐՁԱՅ.

### ԱԴԱՄ.

Փառք քել Աստուած, որ ինձ երեսիցդ բոլորովին չըձգե-  
ցիր. եթէ իմ յանցանքիս չափով ինձ պատժեիր, ինչ պիտի  
մինէր իմ վիճակը. որդոցս առ միմեանս և առ Քեզ ունեցած  
սուրբ սէրն՝ մեծ միթարութիւն է ինձ երկրիս վերայ, որ  
դրախտի ստուերն է. փառք քեզ Աստուած, որ այսպէս միթ-  
արումես մեզ. ( գրկումէ Աբէլին ).

### ԵՒԱՅ.

Գոհութիւն քեզ Աստուած իմ, որ քաղցը միխթարու-  
թեամբ լեցնումես սիրտս, քանի մեծ է քո գթութիւնը,  
որով հաւասարապէս ինամարկումես քո բոլոր արարածնե-  
րին, Աստուած իմ, այս սուրբ սիրոյ կայծը իմ անգրանիկ որ-  
դի Կայինին սրտի մէջ ևս վառէր, որ գոհ լինի իւր վիճակով,  
անտրտունջ ճաշակէ իւր քրտամքք վաստակը և սիրէ քեզ  
ու իւր եղբայրն. ( Կային մտնումէ ):

### ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԱԲԻԱԶԻՒԲ ԵՒ ԿԱՅԻՆ.

### ԿԱՅԻՆ.

Այս ի՞նչ շփոթ է, այս ի՞նչ գրկախառնութիւն. ես շարաւ-  
նակ արևակէդ աշխատեմ, դուք հանգիստ զուարձութեան

մէջ սիրոյ գրկախառնութեամբ զմայլէք, և ինձաստուածաւացաց, եղրայրատեաց և անդո՞հ համարելով դատապարտէք. գուք խնդրումէք Աստուծուց սրտիս մէջ սիրոյ բորբոք, բայց ձեր այդ վարմունքը՝ եղածն էլ մարել է սպառնում: Ես ծառի տակից լսումէի ձեր. խօսքերը, և ձեր տրտունջն միթէ ես ատումեմ Աստուծուն, որին դառն քրտանցս պտուղներից շատ անգամ զոհեր եմ մատուցել: Միթէ Արէլ աւելի՞ է սիրում Աստուծուն և ինձ. նա ի՞նչ ապացոյց ունի իւր սիրոյն, իւր տղայական երգն. դա անգործ Ճպուան պաշտօն է, ոչ թէ մարդոյ. նա զոհումէ Աստուծուն իւր գառներն՝ որ ոչ ինքն է ծնել և ոչ կերակրել և ոչ ես իւր քրտինքը պէտքէ համարել. նա բնաւ չէ սիրում ինձ. այլ անգործ նստած իւր խաշանց մօտ զրօսնումէ Թիրզայի հետ:

ԱԴԱՄ.

Կայի՞ն, որդեակ իմ Կայի՞ն . . .

ԿԱՅԻՆ.

(Ընդմիջելով) Իսկ ես գժոխային երկրագործութեանս մէջ արեակեզ եմ լինում, ոչ հանգստանալու պարապոյ ժամեր ունիմ, և ոչ խաղաղ քուն, ամոլներս արեգակից նեղուելով միախան լեռները, իմ թշուառութեան բաժանակից Միհալան էլ որոնելու է գնացել. իսկ Թիրզան՝ ծնողաց և Արէլի ուրախութեան քաղցր հրճուանքի մէջ է ծփում. ա՛չ, անգութ մայր, ինչո՞ւ ծնար մեղ, անպտուղ լինէր որովայնդ (կամենումէ հեռանալ. Աղամ արգելումէ բռնելով):

ԱԴԱՄ.

Կայի՞ն, իմ անդրանիկ Կայի՞ն, կաց, մի՞ գնար:

ԵՒԱՅ.

Ո՛չ, իմ որդի, ինայիր արտասուքներիս. գլխա մեղ,

ԿԱՅԻՆ.

Ինչո՞ւ ես արգելում ինձ. թող գնամ իմ թշուառութեան վերայ առանձին ողբամ. աշքերդ և գէմքդ ինձ յանդիմանութիւն են սպառնում:

ԱԴԱՄ.

Այո՞, Կայի՞ն, քո արդ կերպ ընթացքովդ դու յանդիմանութեան արժանի ես:

ԿԱՅԻՆ.

Այո՞, ես յանդիմանութեանդ միայն արժանի եմ և ոչ սիրոյդ, վասն զի այդ զգացումն միմիայն Արելի և Թիրզայի համար եք պահել:

ԱԴԱՄ.

Ո՛չ, խարվում ես, Կայի՞ն, վկայ է ինձ երկինք, որ այս արտասուքներս այս արտամութիւնս՝ գորովազէտ սիրոյ նշան են: Կայի՞ն, եթէ դու սիրումես մեղ՝ փութա սրբել մեր արտասուքը. եթէ Աստուծոյ երկիւղի մի կայծ գեռ կայ սրտիդ մէջ, քեզ այն սուրբ կայծի վերայ եմ երկուեցնում. դարձրո՞ւ գէպի մեղ մեր հալածական և հեռացեալ ուրախութիւնը. բաւական է որդի, բաւական է սրտիդ մէջ ոխ ու նախանձ, ատելութիւն և գժոհչութիւն սնուցանես:

ԿԱՅԻՆ.

Ի զ՞ւր խրատ . . .

ԵՒԱՅ.

(Ընդմիջելով) Կայի՞ն, իմ որդի, ինչ է քո արտամութեան պատճառը. չը կիտե՞ս, իմ որդիս որ մեր պահապան հրեշտակներն անգամ ուրախութեան հանդէս են կատարում՝ երր մեր վերայ առաքինութեան գործեր և բարի նպատակներ

ԱԴԱՄ.

են տեսնում. մեր ուրախութիւնը, գրկախառնութիւնը և անուշակ զմայլումն Արելի անրիծ առաքինութեան համար է միայն:

ԿԱՅԻՆ.

Է՛հ մայր, ինչքան կամենումէք այնքան ուրախացէք Արելի վերայ. ես չեմ կարող բաց թողնել իմ այրական բնութիւնը և կանանցօրէն արտասուք թափել որ և իցէ բերկ-րական առարկայի վերայ:

ԱԴԱՄ.

Խարվումես իմ որդի, քո բնութիւնը այրական բնութիւն չէ, այլ գաղանական գառնութիւն է այդ, խեժ է և ատելութիւն՝ որ բոլոր գործոցդ մէջ՝ թէ քեզ գառնացնումէ և անգոհ է անում և թէ մեզ տրամեցնումէ: Ինչո՞ւ գոհ չես քո բաժին երջանկութեան վերայ. ոչ ապաքէն բաց են քո առաջ բնութեան բարեաց աղբիւրները. մի՞ գուցէ հրեշտակաց վիճակին հասանել ցանկանումես, բայց զիտացիր որ հրեշտակաց մէջ ևս դժգոհներ գտնուեցին, որոնք Աստուած լինել ցանկացան, սակայն սխալուեցին և երջանկութիւնից զրկուեցին. Արթնացիր որդի, արթնացիր, ել բաւական և ատելութիւն և անգոհութիւն աչքիցդ գողանան երջանկութեանդ աղբիւրները, որ գոհացող սրտերի բաժին են:

ԿԱՅԻՆ.

Ինձ ոչինչ օգուտ չունին խրատներդ. ի՞նչպէս կարող եմ երջանիկ լինել, քանի որ չեմ կարող հրաման տալ մըրկին չըկախաղել, կամ գարնան հեղեղին յետ դառնալ. Անիծեալ կնոջ անիծեալ ծնունդ եմ ես և դատապարտութեան ենթակայ:

Զէ, Կային, դու թշուառութեան մէջ ծնել չես. Աստուած ոչ մի արարած թշուառ լինելու համար չէ ստեղծել, թշուառ կամ երջանիկ լինել քո կամքից է կախուած: Ասա Կային, դու երջանիկ չէ՞ր համարում քեզ, երբ մոռքիդ մէջ ծագած չէր ատելութիւն և դառնութիւն քո հարազատիդ դէմ. և կամ դժգոհութիւն քո վիճակի վերայ:

ԵՒԱՅ.

( Լալով ) Ա՛հ, Կային, դու մեզ նախատո՞ւմես. միթէ մոռանո՞ւմես որդիական պարտականութիւնդ. վայ ինձ. օգնեցէք. Կային, գթա իմ վերայ, ո՛հ . . . ( ուշքը գնումէ ) :

ԿԱՅԻՆ.

( Ըուարած ) Ա՛հ, այս ի՞նչ արի ես. Կոյր կատաղութիւնս ուր յափշտակեց ինձ: ( Եւայի ձեռքից բռնելով ), Մայր իմ, սմափուիր, ներէ ինձ, ես խոստանումեմ սիրել ձեզ և հնազանդել: Հայր իմ, ներէ յանցանացս, որ կոյր կատաղութիւնս ինձ գործել տուեց. ահա խոստանումեմ սիրել Արելին ( Արելի ձեռքը բռնումէ ) :

ԵՒԱՅ.

( Ուշքի գալով ) Կային, իմ որդի, դու սիրո՞ւմես ինձ, սիրո՞ւմես քո եղբայրը. ո՛հ կրկնիր խոստումնդ:

ԿԱՅԻՆ.

Այո՛, այո՛, ես այսուհետեւ պիտի սիրեմ ամենիդ ևս:

( Ադամ ու Եւայ գրկումեն Կայինին, Կային և Արել գրկախառնվումեն, Թիրզան ստեպ ստեպ համբուրումէ Կայինի ձեռքը ) :

ԱԴՐԱՅ.

Որդեակ իմ Կային, իմ անգրանիկ Կային, Աստուած երկնքից տեսնէ քո զիջդէ և օրհնէ քեզ. ո՛չ ինչպէս ի բաց փարատուեցին արտմութեանս լեռնակուտակ ալիքները. Օրհնեալ օր, խաղաղութեան օր, դրախտի ստուեր օր. Փառք քեզ Աստուած, գու ևս մեր ամենի հայրն ես, ուրախ կըլինիս, երբ դեպ ի քեզ ենք դիմում:

ԱԲԷԼ.

Սիրելի եղբայր, պէտք է մոռանալ անցեալը, եւ մի յիշի՞ր իմ մանկական անգիտութեամբ գործած սխալները. մեր անցեալն թող իսպառ անչետ լինի երազների նման: Ո՞չ ապաքէն գիշերուան սոսկալի երազներն և նոցա ազդած վշտերն առաւաօտը բոլորովին փարատուած են լինում. ո՛չ Կային, երանի՞ թէ կարող լինէի սրտիս ցնծութեան կէսն պատճել քեզ, բերնիս բարբառ պակասումէ, ուրախութիւնից միպյն լալ կարող եմ և քեզ գրկել ու ձեռներդ համբուրել, ( Համբուրումէ Կայինի ձեռքը լալագին դիմօք ).

ԵՒԱՅ.

Իմ սիրելի որդիք, այս ուրախութիւնս դրախտի ուրախութիւն եմ համարում. տրտմութեանս ու ամպերն փարատուեցին զլսիցս. պայծառութիւն և բերկրութիւն պատեցինձ, պտղաբեր ծառի նմանեցի, որ իւր քաղցրահամ պտղով ամենի ճաշակն քաղցրացնումէ: Եկէք համբուրեմ ձեր ուրախութեան արտասուաց քաղցր կաթիճները, որ եղբայրական սէրն բղիսել է տալիս, ( Համբուրումէ Կայինին և Աբէլին: ),

ՏԵՍԱՐԱԿՆ Դ.

ԱՊԱԶԻՆՔ ԵՒ ՄԻՀԱԼԱՅ.

Ո՛չ, այս ի՞նչ ուրախութեան հանդէս է, պատուական ձնողք իմ և սիրելի եղբայր, ո՛չ ինչ բարեբաղդութիւն է

այս, Ես եղներս շատ տեղեր որոնելուց յետոյ, երբ գատարկ գէպի բնակարան էի գառնում, տեսայ որ երկուքն ևս կուշտ արածած՝ նստած էին մեր վարդենեաց տակը. եկայ ձեզ յայտնելու, և ուրախութեան աւետիս տալու, բայց ձեր ուրախութիւնն աւելի է. ո՛չ, ինչ ուրախալի օր:

ԱԲԷԼ.

Միշալայ, քո՞յր իմ. այսօր սիրոյ դաշինք կապեցինք: Իմ անդրանիկ եղբայրս Կային ուրախոց միշտ սիրել ինձ. այսուհետեւ ուրախութիւնն է մեր բաժին:

ՄԻՀԱԼԱՅ.

Քո՞յր իմ Թիրզայ, այսօրուայ սիրոյ ուրախոց հանդիսաւոր անելու համար՝ երթանք գեղեցիկ ծաղիկներ և քաղցրահամ պտղուղներ քաղենք մեր սեղանի վերայ սփռելու:

ԹԻՐԶԱՅ.

Գնանք:

( Մեկնումն: )

ԵՒԱՅ.

( Աղամին, Կայինին և Աբէլին ) Ուրեմն գնանք և մենք մեր բնակարանի մէջ ուրախութեան սեղան պատրաստելու և Աստուծոյ գթութեան գոհութիւն մատուցանելու. ( Ակսումեն մեկնիլ վարագոյրը իջնումէ ):

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ Բ.

ՏԵՍԱՐԱԿՆ ԱՌԱՋԻՆ.

( Հովանոցի տակ փռուած են կանաչ խոտեր և ծաղիկներ ու պտղուղներ. Շուրջ բազմել են, Ագամ՝ ու եւայ մէջ տեղ, աջ կողմը՝ Կային, Միշալայ ու ենովք, իսկ ձախ կողմը՝ Եւայի մօտ, Աբէլ, և Թիրզայ: )

ԱԴՐԱՄ.

Իմ սիրելի որդիք, տեսէք թէ ինչպէս է ցնծութիւնը թագաւորել ամենքիս գէմքի վերայ, որ արդիւկ է երկնային առաքինութեան, այսինքն մաքուր խղճի և սիրոյ. իմացէք որ այդ առաքինութիւնը մեզ Աստուծոյ տեսութեան կրկին պէտք է արժանի անէ. ընդ հակառակն ատելութիւնն ու նախանձը մեզ խաւարի անդունդի մէջ կը ձգի և Աստուծոյ տեսութիւնից բոլորովին կը զրկի.

ԵՒԱՅ.

Աղամ, ո՞վ կը հաւատար որ այս չափ բարիք պիտի պատահէին մեզ այս երկրի վերայ՝ ուր բնակելու դատապարտուեցինք. ո՞չ, որչափ թշուառ էինք, երբ առաջին անգամ միայնակ այս լայնատարած ամայի երկիրն ընկանք.

ԱԴՐԱՄ.

Փառք և գոհութիւն Աստուծոյ, ո՛ գիտէ տակաւին ինչ բարիք տնօրինել է նա մեր համար, որ խոստացաւ կնոջ Զաւակի ձեռօք ջախջախել օձի գլուխլ:

ԱԲԷԼ.

Սիրելի ծնողք իմ, աղաչում եմ, այս ուրախառիթ և հանգիսաւոր երեկոյ վերստին շնորհ արա պատմել մեզ ձեր անցեալ օրերի պատմութիւնը, թէ ինչպիսի կեանք անցկացրիք այս ամայի երկրի վերայ առաջին անգամ բնակելով. Հայր, մենք արդէն միտքներս լաւ պահել ենք ձեր այն պատմութիւնը. թէ ինչպէս քեզ յանկարծ մի զուարձալի պարտիզի մէջ գտար և առաջին անգամ բանականութեանդ բարբառով արտասանեցիր Աստուած, թէ ինչպէս ամենայն նորաստեղծ անասուններ Աստուծոյ հրամանաւ քեզ մօտ եկան և նոցա բնութեան յարմար անուններ դրիր. ինչպէս էիր վայելում դրախտի երջանկութիւնը՝ Աստուծուն դէմ՝ ան-

դիման տեսանելով. մոքներս է նաև այն պատմութիւնդ, թէ ինչպէս յանկարծ անսովոր թմրութեան մէջ ընկար և զարթնելով տեսար մեր սիրելի մայրը քո մօտ կանգնած, որպէս ձեռքից բռնեցիր և ասացիր. « այս այժմ ոսկր յոսկերաց իմոց և մարմին իմարմնոյ իմոյ. սա կոչեսցի կին, զի յառնէ իւրմէ առաւ ». մոքներս է նաև թէ Աստուած ինչ էր պատուիրել ձեզ և ինչպէս չար ու խորամանկ օձը խարեց մեր մօրը և զրկեց երջանկութիւնից, Սերովբէների ու Քերովբէների բոցեղէն սրով փակուեց ձեր և մեր գէմ դրախտի գուռը մինչեւ որ կնոջ Զաւակը օձի գլուխը ջախջախի և մեզ այս պանդխտութիւնից կրկին մեր հայրենիքը վերադարձնի. Այս ամէն պատմութիւնը մենք անմոռաց տպաւորել ենք մեր մոքի մէջ, որով միշտ յիշում ենք Աստուծոյ գթութիւնն ու անյիշաչարութիւնը.

ԱԴՐԱՄ.

Իմ որդիք, ես պարտաւոր եմ միշտ պատմել ձեզ Աստուծոյ արած բարիքն, և գուք ևս ձեր որդուոց և թոռանց աւանդեցէք, որպէս զի նորա սուլքը Անունը միշտ երախտագիտութեամբ և պատկառանգ յիշուի. բայց ասա Եւայ, այժմ ո՞ր տեղից սկսեմ պատմութեանս սկիզբն, այն տեղից արգեք, երբ ձեռն ի ձեռն ամօնթահար գլխակոր դրախտի դռնից դուրս ելանք, չըհամարձակելով յետ դառնալ կամ խօսել, այլ լուս և տիսուր՝ գողդոցուն քայլերով վայրենի խոտերի և երբեմն ապառաժուտ քարերի վերայից անցնելով յառաջ էինք գնում՝ չըգիտենալով թէ ո՞ւր պիտի դադարէինք, և ինչ պիտի պատահէր մեզ.

ԵՒԱՅ.

Աղամ, աղաչումեմ, թո՞ղ որ ես պատմեմ այն, ինչ որ կրեցի, կամ զգացի նոյն ժամուն. ա՞չ, երբ դրախտից բաւական հեռանալուց յետոյ սրտապատառ և աղի արտասուօք լանջացդ վերայ ընկայ՝ աչքերս դէպ ի փափկութեան

դրախտը դարձնելով՝ խորին հառաջանքիցս լեզուս փակուեց, չըդիտէի ինչ խօսելո, մանաւանդ երբ հրեշտակների բոցավառ սուսերը փայլումէին աչքիս առաջ, և խղճահարութիւնս սրածայր փշի պէս ծակումէր սիրտս, որ պատճառ եղայ իմ և քո թշուառութեան Ո՛հ, իմ որդիք, սաստիկ հոգնած ու նեղուած, քաղցած ու ծարաւ հասանք մի բլրակի ստորոտը, առաջին անգամ քրտանց աղբիւրի մէջ լողալով, նստայ մի պառաժի վերայ յուսակտուր, լուռ և տիտուր . . .

### ԱԴԱՄ.

Թ՛մ' Նւայ, ես շարունակեմ: այն բլրակի տակ աղբիւրի մօտ կամեցայ, հաստատել մեր բնակութիւնը նոյն գիշերուան համար, ուր մի փոսի շուրջ մացառներով հիւսեցի, գաղանների երկիւղից պատսպարուելու համար, որոնք մեր անհնազանդութիւնից յետոյ նախսին ընտել բարքին հակառակ՝ աչքերով անգամ սարսափ էին սպառնում մեզ, մինչև իսկ տկար բզէզները և մոծակները խցիւրումէին մեզ, ամեն արարած մեզ թշնամի դասնալով. յանկարծ, նոյն օրը սկ ամպեր պատեցին երկնքի երեսը և սկսաւ երկնք և երկիր սարսափելի և սոսկալի որոտումներով դղրդալ. մենք սպասելով մեր կորստան՝ լեզապատառ գետին փոռուեցինք, և ամաչումէինք դիմել դեպի Աստուած և օդնութիւն իննդրել. Երեկոյեան ժամանակ գագարեցին հօգմերը, որոտումները և շանթերը, և շատ ծառեր մօխիր դարձնելուց և ապառաժ քարեր ձեզքելուց յետոյ, սկսաւ յորդահոս անձրև, և այն օրը եղաւ մեզ ցուրտ զգալու սկիզբն. ո՛հ, իմ որդիք, անկարող եմ պատմել ձեզ նոյն գիշերուան աչ ու գողն. երեւակյութիւնս խսպառ խանգարուած՝ տանջվումէի, ամենայն ինչ աչքիս սուր զգեցած էր երեւում: Առաւօտը նորից փարատուեցին ամպերը և արել նոր հրաշալի պայծառութեամբ ծագեց, Աստուծոյ՝ մեզ հագուցած մաշկեցին հերակը շանգամ մեր առաջարկ շանթակել մեր ձանապարհը, բայց թէ ո՞ր պիտի գնայինք, անյայտ էր մեզ, ամենայն տեղ օտար

էր երեսմ մեզ. ստկաւ մի յասաջ զնացինք, Խւան մի թոշուն գտան անշնչացած, զննեց և գոչեց. ո՛հ, այս է մահը՝ որ Աստուած սպառնացաւ մեզ. ո՛հ, եթէ այս ամայի անապատի մէջ մեր երկուքիցս մին զոհ լինի մահուան, ի՞նչ պիտի լինի կենդանի մնացածի վիճակը. յուսադրեցի իրան և շարունակեցինք մեր ուղին, ներքին ազգեցութեամբ մի աղբիւրի մօտ՝ հաստատեցինք մեր բնակարանը, և այն օր եղաւ մեզ՝ առաջին անգամ քրտամբ ձաշակել, մեծամեծ զժուարութեամբ. քաղելով պտուղներ, որ իւրեանց գեղեցկութեամբ և համով շատ պակաս են դրախտի պտուղներից՝ նոյն օր գտայ մի խոյ և մի մագի, դոցա մեզ ընկեր արի իւրձմիս մէջ. Անցաւ նոյն ամառն, եկաւ աշուն՝ պսակուած զանազան պտուղներով, որ չորացրի ապագային մեզ կերակուր լինելու. հետզհետէ փոխուեց եղանակն, և բնութիւնը սգաւորուեց. ծաղիկները գունաթափուեցին և չորացան. մերկացան ծառերն իրանց պտուղներից և աերևներից, ձիւնը սպիտակ քողով ծածկեց երկիրը. երկար միջոց անգործ մնացինք իւրձմիս մէջ, մինչև կրկին եկաւ գարունը, և զարդարուեցին բոլոր արարածները՝ նոր կենդանութիւն ստացած. Զուարձութիւն թագաւորեց բնութեան վերայ. ծնաւ մագին և աւելացաւ. մեր կերակրոց վերայ քաղցրահամ կաթն ևս. Աստուծոյ հրեշտակը մեզ մօտ եկաւ, քաջալերեց մեզ Աստուծուն ապաւինել, նաև սեղան շինել և նորածին գառն. ողջակեզ անել նորան, զոր այրեց երկնքից իջած հուրն ինչան ընդունելութեան Տեառն.

### ԱԲԷԼ.

(Խօսքն ընդ միջելով.) Պատուական հայր, ներիր համարձակութեանս. որ պատմութիւնդ ընդհատումեմ, հապաէր ծնաւ մեր սիրելի եղբայր Կային.

### ԱԴԱՄ.

Մէ օր, այն ինչ աշխատութենէս դարձայ իւրձմէ, տեսպի որ մայր քեզ, իմ Կային, փափուկ բրդի մէջ փաթաթած,

դիրէն առած ուրախութեան արտասուօք և համբուրիւ գուր զուրումէր, գիրկս առի քեզ, օրհնեցի և յանձնեցի նորա համրիրատար ինամոց, սկսար օր ըստ օրէ աճել և զօրանալ, և դեռ նոր սկսած էիր ափս ի թերս գնալ, ծնաւ Միհալան, և գու յայնժամ սկսար ծաղիկներով զարդարել նորա գլուխը և սիրապատար խնդութեամբ համբուրել յետոյ+ Արէլ գու ծնար և ապա Թիրզան, Արպիսի ցնծութեամբ լցուեց մեր սիրտը, երբ ձեր աղայական խաղերն և հրճուանքները դիտում էինք, և զբաղած էինք խնամել ձեզ, փորձով տեսնելով, որ նորածին մանուկն աւելի խնամոց կարօտ է քան թէ գառն. Օրհնեալ է Տէր, որ այսչափ սքանչելիքներ է գործում և մեզ խսպառ երեսից չի ձգում. Արին պարտաւոր ենք սիրել միշտ երախտագետ լինել նորան և հնազանդել, Սիրելի պրգեակք իմ՝ խնդումեմ, որ դուք նախ սիրեք Աստուծուն և ապա միմեանց՝ ինչպէս ձեր անձն.

### ԱԲԷԼ, ԹԵՔՁԱՅՑ ԵՒ ՄԻՀԱՆԱՑ.

(Առջի վերայ ենելով համրուրումն Ադամայ ու Եւայի ձեռները, իսկ Արէլ ասումէ) Ընդունեցէք ո՛ պատուական ծնողք, մեր շնորհակալութիւնը, որ անկարօղ ենք լեզուով պատմել, ընդունեցէք մեր խոնարհ համբուրը իբրև մեր սրտի զգացմանց ապացոյց և նշան. օրհնեալ է Այն, որ խնամումէ մեզ առհասարակ, և օրհնեալ էք գուք, որ պահպանումէք մեզ և ուղղումէք դեպ ի բարին.

### ԿԱՅԻՆ.

(Հոգւոց հանելով ակամայ համբուրումէ Ադամայ ու Եւայի ձեռները) Ընորհակալ եմ և ես, բայց ներեցէք ինձ, որ հանգստանամքնով, վասն զի հոգնած անդամներս փաքը ինչ հանգիստ են պահանջում, որ կարօղ լինին առաւօտ անդիս մէջ կըկին կրել երկրագործութեան ծանր աշխատութիւնն, որուն կապուած եմ Հարաշար,

### ԱԳՐԱՐ.

Հանգստացի՞ր իմ որդի, պապէս զի անգամներդ կըկին ոյժ ստանան, որով կարողանաս կատարել Աստուծոյ հրամանը, այսինքն քրտամբք ճաշակել, Եւայ, Արէլ, Թիրզայ, գնանք մենք էլ հանգստանալու մեր իրադիմների մէջ. ձեզ գիշեք բարի, իմ որդիք, (Կը մեկնի).

### ԵԽԱՅ.

Հանգիստ քուն և քաղցր երազ մաղթեմ քեզ, իմ անդրանիկ Պատին (Կը մեկնի).

### ԿԱՅԻՆ.

Դնաք բարեռ:

### ԱԲԻԼ.

Սիրելի եղբայր իմ Այիին, խնդութիւնիցս՝ այս գիշերը ինձ ցերեկ է համրագում, թէ և չեմ կամենում քնել, բայց քեզ հանգստութիւն է հարկաւոր. խաղաղ քուն եմ մաղթում (ձեռքը համբուրումէ ու Թիրզայի հետ հեռանում)

### ՏԵՍԱՐՈՂ Բ.

ՄԻՀԱՆԱՑ ԵՒ ԿԱՅԻՆ.

### ՄԻՀԱՆԱՑ,

Ինչո՞ւ տակաւին Ճակատիդ կնճիռն չի յետ գնում, իմ սիրելի Կային. այն հանգստութիւնը, որ քո սրտի մէջ գարձաւ այսօր, տակաւին չկարաց ախրութեանդ ու ամպերը փարատել.

### ԿԱՅԻՆ.

Ինձ խօսել մի ստիպեր Միհալայ. ձեր ուրախութիւնը աւելի է խոցում սիրտս, ոչ ապաքն դորանով կամենումէք

շոյց տալ, իբրև թէ Կային մողորուած էր, ու զզուեցաւ,  
իբրև թէ չար էր ու եղբայրատեաց, այսօր բարի գարձաւ. ոչ,  
են ոչ մողորուած էի, որ ուղղուեցի, և ոչ չար ու եղբայ-  
րատեաց էի ու բարի եղայ, այլ ինչ որ էի, նոյն եմ. ձեր  
անմտութիւնը այսպէս է գատում՝ և կարծել է տալիս. Ես  
Աբէլին բնաւ չեմ ատել, միայն թէ նորա կեղծաւոր բնու-  
թիւնը ինձ զզուելի է, վասն զի նա իւր կեղծաւորութեամք  
թէ ծնողացս է սիրելի եղել և թէ հանդիստ վիճակ է ընտրել  
., . . . , Միհալայ, ի՞նչ անմտութիւն է մեր ծնողաց՝ իրանց  
ամօթալի անկման պատմութիւնը միշտ կրկնել, որ այնչափ  
թոյլ ու տկար եղան, մինչ ըլքարացին մի պտուղ պակաս ու-  
տել, և մեզ տակաւին ըլծնած թշուառութեան մէջ գլորել,  
դրախտից զըկել, որով գատապարտուեցինք անհնարին տան-  
ջանքով ու քրաինքով ճաշակել մեր հացը. Միհալայ, այժմ  
գու ասա, ամօթ չէ որ մեր ծնողքը իրանց ամօթալի անկման  
պատմութիւնն միշտ կրկնումեն.

ՄԻՀԱԼԱՅ.

Բայց . . . Ապյօնն, ինզրեմ մի բարկանար արտասուցած  
վերայ (լալով), աղաչումեմ, մի թոյլ տար որ տրտմութեան  
փարատուած ամսիերը կրկին դիզուեն գլխիդ վերայ. Աբելին  
մի տահիր, և մի բամբասիր մեր ծնողքը՝ որ Աստուծոյ  
սքանչելիքը և Նորա մեծ գթութիւնն են մեզ պատմում,  
մեր սրտի մէջ երախտագիտութիւն և առաքինութիւն ցա-  
նելու համար:

ԿԱՅԻՆ.

Գնամեք Խրչիթը հանգստանալու; շատախօսութիւններ  
պլուսն տարան այսօր; (Կրմեկնին)

ՏԵՐԱՎԻՐԱՆ

• ԱՐԵՎ •

Ահա, Հայրս, սաստիկ, որովայնի խիթով տանջվում է. Ի՞նչ  
անեմ Աստուած իմ, գու օդնէ նորան. (Կը չոքի բացիա-

տարած) Օրչնումեմ Քեզ, Տեր երկնի և երկրի, օրշնումեմ  
Քեզ, որ անսահման գթութեամբ և իմաստութեամբ տհօրի-  
նումես ամենայն ինչ, համարձակվումեմ նեղութեանս մէջ  
օդուութիւն խնդրել. թէ և դու իմ ինդրելուց յառաջ գիտես  
մեր պիտոյքն և հոգումես, Քո տհօրինածդ միշտ բարի է,  
Աստուած իմ. եթէ իմ փափաքս Քո սուրբ կամաց հակառակ  
չէ, աղջում եմ, պարգևեիր մեզ մեր պատուական հայրը,  
որ Քո գթուութիւն միշտ պատմէ մեզ, փարատէ նորա ցաւե-  
րըն, որով չարաշար տանջվումէ. Քո մէկ ակնարկութիւնդ  
հրաման է նորա ցաւերին հալածելու, Աստուած իմ. (յան-  
կարծ ահաւոր լուսափայլութեամբ մի հրեշտակ է մտնում):

ՏԵՇԱՐՄԱՆ Դ.

ԱՐԵԼ ԵՒ ՀՐԵՍՏՈ

ՀՐԵՀՏԱԿ

(Φοινὶς μὴ δωρῆσαι δέκαρρα) Καρτέλ, φον ψευδεπιστημάνη αποθέτει  
ευεργήτη την απόβασην καταρρίπτει, αφού Σραμαρικός βίντα οφ-  
νει λάθη, από την δωρητήν ερρει. Ιστοικός ψηφίζει, πατέρα  
Βαρδακήν, ορθά την μητέρα την απορρίπτει, (Καρτέλ θυσίαν αρχέτοπην  
αποτελεῖ δωρητήν καταρρίπτει Σραμαρικός απόβασην παρατημένην);

СВОЦЕЛЬ. 6.

ԱԲԵԼ

(Ապշութեամք) Ա՞վ Աստուած իմ; ևս ո՞վ եմ; չող և մոխիր և մեղաւոր մի մարդ; բայց դու բարեհաճումնես լսել պաղատանքս. ո՞վ Տէր իմ; Բ՞նչպէս կարող է մի մահկանացու՝ արժանաւորապէս գոհանանալ Քիզանից կամ գոհարանել Քո անսահման գթութիւնը. ոչ միայն մահկանացուաց տկար շրմունքը, այլ և անմահից գունդն ևս չէ կարող արժանապէս օրհնել քեզ: (Տեսանումէ),

ՏԵՍԱՐԱՆ Զ. Հայութ զ. Խաղող

ԿԱՅԻ

Հայրս բաւական տկար է, սաստիկ տանջվումէ, իսկ մայրս

բոլորովին յուսահատած արտասուաց հեղեղներ է ժամանակ

իւր աշքերից և եւ չըկարողացայ համբերեր, ակամայ աշ-

քիցն արտասուաց թափուեց. նորա խօսքերն աղջու երն և

սրտիս խորերը թափանցեցին. ասումէ թէ ես պիտի մեռա-

նիմ. բայց չէ չըկարծեմ որ նա մեռնի, մարդ ինքնին ինչ-

պէս պիտի մեռնի. Աստուած իմ, գու ևս մի թողուր որ

մեռնի, տակաւին ափսոս է, ինձ օգնումէ գեռնապին երկրա-

գործութեանս մէջ. բայց եմէ մեռնի, ես ի՞նչ անեմ, մոզ

արգելած պտուղն չուտեր որ չըմեռներ.... արգեօք մահն

ի՞նչ բան է, գայլի նման է, որ ինչպէս յափշտակումէ ոչ-

խարը, մահն էլ այնպէս պիտի յափշտակէ և ժանիքներով

փշրէ հօրս. ոչի ինչ վատ բան է մոհը. Աստուած իմ, մի

թողուր հօրս, որ մեռնի, ես խոստանամ իմ աղքատու-

թեանս չափով զոհ մատուցանել Քեզ. բայց ես գնամ) մի

առանձին տեղ հանգստանամ մինչ առաւօտ, որ միգուցէ

կրկին անգամ գան ինձ գտնեն, տանեն և մինչ ի լզս ան-

հանդիսաւ անեն:

( Արել կրմտնէ ) .

ՏԵՍԱՐԱՆ Է.

ԱԲԵԼ ԵՒ ԿԱՅԻ.

ԱԲԵԼ.

Եղբայր իմ՝ Կային, Տէր լսեց մեր պաղտանքն և առող-

ջացրեց մեր պատուական հօրը:

ԿԱՅԻ.

Տէ, Արել, նա շատ տկար է, տակաւին չէ առողացել,

գուցէ կառողանայ, ես շատ աղօթեցի նորա համար և խոն-

ացայ զոհ մատուցանել Աստուծոյ, եթէ հայրս առողանայ:

ԿԱՅԻ.

ԱԲԵԼ.

Եղբայր իմ՝ Կային, Աստուած գթալով մօրս աղի արտաս-  
ուաց, լսելով մեր ամենքի պաղտանքը, հրեշտակի ձեռքով  
մի փունջ ծաղիկ տուեց ինձ, որ նորա հրամանի համեմատ  
պարզ ջրով եփեցի, տուի հօրս՝ խմեց և իսկոյն առո ջացաւ,  
որչնեց Աստուծուն և մեզ. նա առաւօտ իւր սեղանի վերայ  
զոհ պիտի անէ, միք ևս պարտաւոր ենք զոհեր մատուցանել  
ի շնորհակալութիւն:

ԿԱՅԻ.

Ես ի՞նչպէս շըբարկանամ և չընախանձեմ. մի ժամ ես  
աղօթեմ հօրս համար, բայց հրեշտակը ինձ չերեկ և ծաղիկ  
չըտայ. այս է իմ՝ անդրանկութեան պատիւն, այս է իմ՝ ար-  
տասունքի և աղօթքի վարձքը, մարդու մօտ անպատիւ, հրեշ-  
տակի մօտ անպատիւ և գուցէ Աստուծոյ մօտն ևս անպա-  
տիւ. բո ձեռօք բժշկուեց հայրս, ուրեմն ևս աւելի պիտի  
սիրէ քեզ և անգրանկութեանս օրչնութիւնն ևս պիտի տայ  
քեզ. վայ ինձ և եղուկ, որ անդրանիկ ծնայ. ես ի՞նչ սրտով  
զոհ պիտի մատուցանեմ. Աստուծոյ՝ որ ինձ չըլսեց:

ԱԲԵԼ.

Եղբայր իմ՝ Կային, ոչ ապաքէն Աստուծոյ գթութիւնը  
մեղ հաւասարապէս ողորմեց, առողջացնելով մեր պատու-  
ական հայրը և այն ևս գուցէ մօրս և մեր ամենի արտասուաց  
ինայելով, ուրեմն առաւօտ զնանք մեր զոհերն մատուցա-  
նել, խոնարհութեամբ և ամենայն սիրով, ընարելով մեր  
ամենալաւ գառները և պտուղները:

ԿԱՅԻ.

Թէպէտ աղքատութիւնս ինձ չի ներում զոհ մատուցա-  
նել, բայց պիտի մատուցանեմ, վասն զի խոստացել ևմ.  
Երկարծեմ թէ կառն քրտինք թափելով աշխատանք անել

և ընտանիք զրկելով զոհ մատուցանել՝ Աստուծոյ հաճելի կրլինի. պէտք է աւելորդ պտուղ ունենալ և յօժարութեամբ Աստուծոյ նորիելի

ԱԲԷԼ.

Եղբայր իմ Կային, Տէրը մեր զոհին բնաւ կարօտ չէ, վասն զի ամենայն արարածք եւրն են, այլ միայն մեր սրտի ջրեմեռանդութիւնը, աստուածպաշտութիւնը և երախտադիտութիւնն է պահանջում, որոյ նշան և ապացոյց կըլինի մեր զոհաբերութիւնը:

ԱԱՅԻՆ.

Կէս գիշեր անց է կացել, գեռ ևս չեմ հանգստացել, զուր անքուն, անհանգիստ եմ լինում. Տէրիք, փոքր ինչ ինչ հանգիստ թողեք:

( Կըմեկնին ):

ՏԵՍԱՐԱՆ Ը.

ԱՆԵՄԵԼԻՔ.

( Սեագէմ'երկար եղջիւրներով, պոչով, սև մազեղեն հազուսով, կէս այծ, կէս մօրդ, երկու ոտքի վերայ կանգնած և մի հեծանոց ձեռքը բռնած ) Միթէ ես Սադոյէլից պակաս գործ կարօդ եմ կատարել. ինչո՞ւ փառք և պատիւ միայն նա վայելէ գոռոզաբար աթոռի վերայ բազմելով, ես աննշան անանուն խառնիծաղանձ զեւերի մէջ նստեմ անդործ. ոչ ոչ, ես էլ ման գալով երկրագնդի վերայ, ջանամ, աշխատեմ մի այնպիսի գործ գործել, որ բոլոր գժոնիք զարմանայ և ինձ Սանդարամետի փառք և պարծանք ճանաշէ. երթամ գտնեմ Կայինին, նորա ձեռքով փորձեմ թէ, ի՞նչ է մահու մեռնելը, զոր Սասուած սպառնացաւ Ադամին, երբ որ գրախտից մերժելով ձգեց անապատ երկրի մէջ. բայց երկրն ևս զեհեան չէ, նորա վերայ էլ կարող են հանգիստ ու երջանիկ ապրել. Այսուհետեւ լինիմ անբաժան ընկեր Կայինին, որով կարողանամ թշուառութիւն և մեղք մացնել

մարդկանց մէջ, և ես էլ պարծենալու տեղ ունենամ ընկերներիս մէջ. Եթէ Սատանան պարծենումէ Ագամին ու Եւային զրախտից զրկելու վերայ, հապա ո՛բափ մեծ կըլինի իմ փառքն ու պատիւը, երբ իմ կամքս Կայինի և նորա նմանեաց ձեռքով պիտի կատարեմ միշտ, վասն զի Կայինի սիրոն իմ կամաց համաձայն է. ոխ, ատելութիւն, նախանձ, բարկութիւն և այլն նորա սրտի մէջ մէկի տեղ հարիւր են պտուղ տալիս. Գլուխս հնարքներու գանձարան է, պիտի աշխատեմ երկրագունութը գժոնիքից աւելի թշուառութեան տեղի գարձուցանել, գնամ գիշերս խորհեմ:

( Հեռանալու ժամանակը վարագոյրը իջնումէ ):

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ Գ.

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ԱԱՅԻՆ.

Ե'կ մահ, Ե'կ ապականութիւն . . . : Գազաններն և սողունները ինձանից երջանիկ և զուարթ են, այս ի՞նչ թրշուառութիւն, ի՞նչ անպատուութիւն է, Աբէլի զոհն ընդունեց Աստուած, երկնքից կրակ իջաւ վառեց, որի անուշահոտութիւնը բոլոր աշխարհ տարածուեց, իսկ իմ զոհս չընդունեց. սաստիկ փոթորիկը բոլոր պտուղները ցրուեց լեռների և գաշտերի մէջ. գարշահոտութիւն սփռուեց երկրի վերայ, ի՞նչ է իմ յանցանքս՝ որ մարդիկ ինձ ատում են, հրեշտակները ինձ արհամարհումեն, իսկ Աստուած խայտառակում ու պատժումէ. բոլոր բնութիւնը իմ գէմս զէնք է առել. ամենի երեսները միշտ զուարծութեամբ են պայծառանում, իմ համար ամենայն ինչ տրտմութիւն է և տըխուրութիւն, որովհետև նոցա այդ ուրախութիւնը կարծես ինձ յանդիմանելու համար են միայն. Երեկոյեան անկողին եմ մտնում զառն տրտմութեամբ, առաւօտը զարթնումեմ անմիթաբ ոգով, մինչեւ իսկ երազները տանջումեն ինձ կարհուրելի երեւոյիմներով. Քունը՝ որ բոլոր արարածոց

Համար հանգստութեան պարզել է, իմ համար պատիժ է և անհանգստութիւն. Ընկերական կեանքն մինչեւ անգամ առաջնոց է ցանկալի, իսկ իմ համար ատելի է դարձել. դաշտի գաղանաց պէս միշտ սիրումեմ առանձնութիւն. Անիծեալ լինի այս օրը երբ ծնուեցի . . . ( նստումէ քարի վերայ ) ովքուն, գեթ այստեղ խաղաղութեամբ բարեկի ինձ. աւելի սիրումեմ մթութեան և սուտ երազոց անձնատուր լինել քան արթնութեամբ տանջուել: Երանի թէ մշտնջենաւոր գուն մի տիրեր ինձ և բնաւ չըղարթնէի . . . ո՛չ, բոլոր անդամներս թուլացել են: ( ննջումէ է ):

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԱՆԱՄԿԵԼՔ.

Աներջապէս գտայ Կայինին, սա շատ յարմարաւոր գործիք է իմ հնարքներս գործադրելու. ի՞նչ յարմարագյն միջոց, աշաւասիկ թանձր գուն մի պատել է իրան, ես ել սորամօտն լնկողմնեմ ( պարկումէ Կայինի մօտ, մի ձեռը գնումէ Կայինի աշքի վերայ, իսկ միւսն սրտի վերայ ), եկէք ինձ օգնել, գժոխային երազներ, խօլական անուրջներ: Ցըռւեցէք, խանգարեցէք սորա խելքն ու միտքը. շփոթեցէք սորա երեւակայութիւնն, կատաղեցրէք վրէժինդրութեան, ատելութեան և նախանձու ոգին գեպի Արէլը. այնպէս մի երազ ներկայացրէք սորան՝ իբրև թէ մի լոյնածաւալ գաշտի մէջ արեգական տաք ճառագայթների տակ իւր որդիքն ու թոռները իրանից աւելի խիստ աշխատութեան և քըրտանց մէջ են, և ամենայն կողմից իրան անիծող ձայներ լսելի արէք սորան, և իւր թոռներից ոմանք ևս Արէլի թոռանց գերի. իսկ ընդհակառակն ցոյց տուեք Արէլի որդիքն և թոռունք՝ որ ուրախ, զուարթ՝ գեղեցիկ պարտէզներու մէջ կարկաջանու աղբերների վերայ, հանգիստ վայելում են բնութեան բարիքն և օրհնում են Արէլին. Թող այսպիսի երազներով բարիքն և օրհնում արկութիւնն Արէլի վերայ և սկսի վրէժդրութիւններ, ատելութեան և նախանձու ոգին կատաղել:

իւր մէջ. ( ետեւ նայելով ու յետ գառնալով ) բայց ահա եկաւ Արէլ, ի՞նչ յարմարաւոր ժամ, այժմ փափազս կատարվում է, թող գայ Արէլ՝ հրեշտակաց բարեկամն, իւր բաղզը որոնելու ( հեռանումէ ):

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԱԲԷԼ ԵՒ ԿԱՅԻՆ.

ԱԲԷԼ.

( Կայինի վերայ նայելով ) Ո՛չ, Ելթ արդեօք պիտի զարթնի եղբայրս, որ ուրախ ողջունեմ, զրկեմ և միիթարեմ. բայց ո՛վ գիտէ, ի՞նչ սարսափելի երազներով պաշարուած է, որ քնոյ մէջն անգամ ճակատը կնծուած է և գեմքի գծագրութիւնը բոլորպին տիրութեան մէջ է երեւում . . . գնամ, հեռանամ. մի՛ գուցէ . . .

ԿԱՅԻՆ.

( Յանկարծ զարթնումէ՝ առանց Արէլին նայելու կատաղաբար կանչումէ վաղելով այս ու այն կողմ ), Պատուուիր երկիր, կուլ տուր ինձ. զ'յ ինձ. անիծեալ լինի այն օրն, անիծեալ լինի այն ժամը, երբ ես ծնուեցի, երբ արև տեսայ, երբ զոհեցի, երբ խայտառակուեցի. ( ոտքը գետնին զարկելով ), պատուուիր երկիր, կուլ տուր ինձ, չըտիսնեմ իմ որգւոց և թոռանց թշուառութիւնը, չըտեսնեմ նոցագերի լինել Արէլի սերնդոց . . . Երկինք, լեռներ, փուլ եկէք իմ վերայ, Ճմիցէք ինձ ձեր տակ:

ԱԲԷԼ.

( Թողարկով ) Եղբա՛լը իմ Կային . . . ո՛չ ի՞նչ եղաւ քեզ, եղբայր իմ . . .

ԿԱՅԻՆ.

Պորամանկ օ՛ձ, այս տեղ ես հա՞մ, հեռացի՛ր:

ԱԲԷԼ.

( Կամինալով Կայինի ոտքն ընկնել ) Կերիր եղբայր իմ . . .

ԿԱՅԻՆ.

Օ՛ձ, ստների՞ս ես փաթամվում, ( փայտով զարնումէ Արէլի գլխին, որ գետին է փալում ուշաթափ, Կային սսոկալով յետ է քաշվում ձեռքի փայտն գետին ձգելով) ո՛չ, այս ի՞նչ եղաւ. ( բոնցքով իւր գլխին զարկելով ) անիծեալ հարուած, ( դողալով մօտենումէ Արէլին, գլուխը գետնից վերցնումէ ) Արէլ . . . եղբայր իմ Արէլ . . . ի՞նչ եղար, եղբայր իմ . . . զարթնիր . . . ո՛չ. ի՞նչպէս գեղնեց, աչքեր խփուեցին . . . ո՛վ սոսկալի տեսիլ . . . ի՞նչպէս գլուխն արեան մէջ ծփումէ . . . Արէլ . . . եղբայր իմ Արէլ . . . արթնացիր, ( մօտենումէ և շարժում ) Արէլ, վեր կաց . . . ո՛չ, մեռան, այս է մահ. . . մեռան ի՞նչպէս ողջակէզ գառն . . . փախչեմ ես . . . բայց ո՞ւր . . . փութացէք թուլացած ծունկներս. փախչեմ անտառների մէջ կորչեմ . . . ո՛վ սոսկալի վիճակ, ( միշտ յետ յետ դառնալով հեռանումէ ).

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՀՐԵՇՏԱԿ.

Արէլ, եկ խառնուիր մեզ հետ Աստուծուն փառաբանելու, զու մեր պակասն լրացնելու համար ես ստեղծուած. ( Կային մտնումէ ).

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ԿԱՅԻՆ ԵՒ ՀՐԵՇՏԱԿ.

ԿԱՅԻՆ.

( Առանց հրեշտակին տեսնելու ) Ո՞ւր փախչեմ, ո՛վ սարսափելի ոճիր, հեռացէք գողգոջուն ստներս, հեռացէք այս սոսկալի տեսարանից, ( կրկին կամենումէ հեռանալ, հրեշտակը արգելումէ ).

ՀՐԵՇՏԱԿ.

Ո՞ւր ես փախչում դահիճ. խիդճ ու Աստուծած դատախազ են քեզ, Աստուծուց փախչել ես կամենում, դարձիր

կրկին գէպի Աստուծած և պատասխան տուր, ո՞ւր է քո Արէլ եղբայրը.

ԿԱՅԻՆ.

( Ըգարած և կակազելով ). 2րգիտեմ, միթէ թէ ես, նորապահապա՞նն եմ:

ՀՐԵՇՏԱԿ.

2րգիտեմ, եղրօրդ արեւնը բողոքեց Ամենակալի աթոռի առաջ, Անիծեալ լինիս երկրի վերայ, որ ձեռքովդ եղրօրդ արիւն թափեցիր. աշխատես՝ բայց աշխատութեանդ պառուղը չուտես, քո բոլոր կենաց մէջ երերեալ տատանեալ լինիս Այսպէս վճռեց յաւիտենական անխար Դատաւորն. ( աներկութանում է ).

ԿԱՅԻՆ.

( Ակսումէ սաստիկ դողալ ). Ո՞ւ ի՞նչ եղայ ես, այս ի՞նչ անսովոր քրտինք ողողեց ինձ. գողումեմ, սիրոս տրոփումէ, կարծես թէ երկինք, գետին, մարդ և անսուն և նոյն իսկ իմ ստուերն ինձ հալածումեն. անիծեալ բազուկ . . . անիծեալ երազ անիծեալ հարուած . . . Ո՞ւ, այս եկան Ադամ ու Եւայ, ո՞ւր փախչեմ ես, ո՞ւր կորչեմ ես.

( Հեռանումէ ).

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ԱԴԱՄ ԵՒ ԵՒԱՅ.

ԵՒԱՅ.

Ո՞ւ, ի՞նչ է այս, Արէլն ի՞նչ անսովոր կերպով փոռուել է գետնի վերայ, ո՞ւ . . . ( ուշաթափվումէ ).

ԱԴԱՄ.

Ամյ ինձ, արիւն է հոսում Ճակատից . . . ( չոքումէ Արէլի մօտ ) որդեակ իմ . . . Արէլ. ի՞նչ է եղել, այս է մահը. սոսկալի ժամ. ( ուշաթափվումէ, Կային մտնումէ ).

ԱՎԱՑԻՆ.

Ո՞չ, տակաւին Արէլը չարթնեց, անիծեալ հարուած։ չո՞րանեար բազուկս, ախ դառն նախանձ։ ( Հեռանումէ )։

ԱԴԱՄ.

( Ուշքի գալով ) Կային, ի՞նչ եղար, ո՞ւր գնացիր. աւազ թշուասիս, Կային սպանեց Արէլին։ Արէլն սպանուած է, ո՞չ, ո՞ւր եմ ես, երազ արգեօք, վայ և եղուկ ինձ։ ( ընկումէ Արէլի վերայ )։

ԵՒԱՅ.

( Ուշքի գալով վերցնու մէ գլուխը ), Ադամ, Ադամ, վեր կաց, ձայն տուր Արէլին . . . Արէլ, որդեակ իմ, արթնիր . . .

ԱԴԱՄ.

Ի՞նչ ցաւոց անդնդոց մէջ խորասուզուեցինք. երանի թէ ծնած չըլինէի քեզ Կային, ծնած օրդ խաւարէր. արև չըմաննէիր։

( Հրեշտակը մանումէ )։

ՏԵՍԱՐԱՆ Է.

ԱՌԱՋԻՆՔ ԵՒ ՀՐԵՇՏԱԿԻ,

ՀՐԵՇՏԱԿԻ.

Ի՞նչո՞ւ էք լալիս անմխիթար. մի սգաք, անմահ հոգիների և արդարների համար սուգ պէտք չէ. մահը ոչինչ չըկարուղացաւ անել, այլ միայն քանդեց նորա մարմնեղէն բնակարանը, դուրս հանեց պայծառ հոգին, որպէս զի մեղ հետ Աստուծուն միշտ օրհնէ. դուք ևս հետզհետէ նորա մօտ պիտի գաք. Լոիր, Ադամ, այսովէս է հրամայում յաւիտենական Բարութիւնը, հողը հող պէտք է գառնայ. ( անհրեռութանում )։

ԱԴԱՄ.

Օրհնումեմ քեզ, երկնային բարեկամ, որ Աստուծոյ հրամանն մեզ յայտնումես Աստուծ իմ, որքան մին է

Քո գլութիւնն ու անյիշաքութիւնը, որ անպատճում յուսով մխիթարումես մեզ . . . Ասաջինն է այս, որ այսօր հողին պիտի յանձնուի լստ Աստուծային վճռոյ ի հող գառնալու։

ԵՒԱՅ.

Ո՞վ մայրական գութ, աղիքներս կտրառելով բերնից գուրս են թափվում. ( ուշաթափվումէ, Թիրզայ և Սիհալայ մտնումեն )։

ՏԵՍԱՐԱՆ Ի.

ԱԹԱՋԻՆՔ, ԹԻՐԶԱՓ ԵՒ ՄԻՀԱԼԱՅ.

ԹԻՐԶԱՓ.

Ո՞չ, ի՞նչ է այս Սիհալայ. ո՞վ է գետին փռուածը. ո՞ր եմ ես, Աստուծ իմ. ի՞նչ սոսկալի երազ, Աստուծ իմ, ո՞վ է այս գետին փռուածը, Արէլը, ի՞նչ է այդ, հայր իմ. ո՞վ է գա, մայր իմ. Արէլ, իմ ցանկալի Արէլ . . . Ո՞վ իմ երջանկութիւնս, ո՞վ իմ կեանքս, ո՞վ իմ լոյսս . . . ո՞չ, զարթնիր, իմ սիրելի Արէլ, իմ կենակից, լոիր, Թիրզան է քեզ ձայնողը, զարթնիր. Աստուծ իմ, ո՞ւ զարթեցուր.

ՄԻՀԱԼԱՅ.

Արէլ, իմ սիրելի Արէլ, ո՞չ . . .

ԱԴԱՄ.

( Լալով ) Սթափուիր Թիրզայ, սթափուիր Սիհալայ, անմահ հոգիների համար սուգ պէտք չէ։

ՄԻՀԱԼԱՅ.

Թո՞ղ որ լանք, Հայր իմ. դու, ո՞վ մեր մխիթարութիւն և ցնծութիւն Արէլ, ո՞ր գնացիր բաժանուեցիր, Թողիր մեզ անմխիթար սուգի մէջ. Մեր դործը պիտի լինի այսուհետեւ ողբալ անդադար. Կային, ո՞ւր ես, արի տես, քո հարազատք ի՞նչպէս անշնչացած է իրբե գառն։

ԵՒԱՅ.

Ով չարածնունդ Կային. Աստուծոյ, Հրեշտակների և  
մարդկան ատելի Կային. գոսանար բազուկ:

ՄԻԱՅԼԱՅ.

Ո՛չ, ի՞նչ եմ լսում, գաղանային սիրտ, գաժան Կային,  
եղբայրասպան Կային:

ԹԻՐՁԱՅ.

(Գլուխ վերցնելով Արէլի գիտի վրայից). Ո՛չ, անիծեալ  
Կային, չորանային ձեռներդ:

ՄԻԱՅԼԱՅ.

Քոյր իմ Թիրզայ, մի անիծեր, քո և իմ հարազատն է.  
աղօթենք նորա յանցանքի թողութեան համար. աղաչու-  
մեմ, մի անիծեր, մեր անդրանիկ եղբայրն է, իմ փեսան է:

ԹԻՐՁԱՅ.

Ո՛՛ը յափշտակեց ինձ աղէտիս գառնութիւնը, չեմ անի-  
ծեր իրան: (Ընկնումէ Արէլի վերայ գոչելով), Արէլ, ի՞նչ-  
պէս քո ընկած ժամանակ մօտդ չըգտնուեցի, որ քաջցրիկ  
ձայնդ վերջին անգամն էլ լուէի և իմ հոգիս էլ քո հետ  
փչէի. վայ ինձ, ինչո՞ւ կենդանի մնացի, կորցրի ամեն ունե-  
ցածս. ինձ այսուհետեւ ատելի են սոսակն ու վարդը, գառն  
և մաքին, լոյս և կեանք: Արէլ, անտերունջ մատաղ գառ-  
ներիդ բառաջումն իմ հոգիս պիտի քալէ, սուրբ սեղանոյդ  
դատարկութիւնը իմ ցաւերս պիտի նորոգէ և բազմապատ-  
կէ, միշտ այս սոսկալի տեսարանս պիտի երեւթեանայ  
երեակայութեանս առաջ, միշտ պիտի տեսնեմ այս քաջցրա-  
հայեաց սիրակաթ բիբերդ անշարժ և խաւարած. այս մահ-  
ուսան դեղնութիւնը բոլոր մարմինդ խնկոյ գոյն դարձրած.  
շուշանագեղ դէմքդ և ճակատդ լերդացած արիւնով. նոնա-

կեղեւ շրթունքդ և գալարագեղ բազկունքդ թարշամած և չո-  
րացած ինչպէս ծաղիկ՝ իւր ցողունի վերայ խորշակից թա-  
ռամած:

ԱԴԱՄ.

Ո՛չ, բաւական է Թիրզայ, Լուր հօրդ ձայնին:

ԹԻՐՁԱՅ.

Խաւարած աչքերս, արտասոււաց կաթիլներ բղխեցէք սըր-  
տիս և սիրոյս բնակարանի քանդման վերայ: Լուացէք այս չո-  
րացած և լերդացած արիւնը... ո՛չ, ո՞ւր են այն քաջցրահա-  
յեաց բիբերդ, անուշակ ժպիտդ, սոխականման դայլայլիկդ.  
ո՞ւր են, ի՞նչ եղան, ո՞ւր հեռացան. ո՛չ, բղխեցէք արտա-  
սութենք, բղխեցէք. այսուհետեւ ինձ բաժին մնաց գառն  
սուգ, ողբ ու կոծ և արտասութ: (ողբում է):

Ո՛չ, իմ կենաց քաջցրիկ ժամեր

եւ ցնծութեանս պայծառ օրեր

ինչպէս շուտով անհետ խսպառ

եղան ու ինձ թողին թշուառ:

Սուգ դառնութեան վշտեր և ցաւ

եւ արտասութ ողբ՝ կոծ անբաւ,

Ցաջորդեցին անտեր հիբոյս

եւ խլեցին իմ ամեն յոյս:

(Ընկնումէ Արէլի վերայ):

ԵՒԱՅ.

Բաւական է Թիրզայ, Միհալայ. ձեր ողբ, և կոծը հոգիս  
քաջում են, ձեր լացն ինձ յանդիմանութիւն է: որ պատ-  
ուիրանազանցութեամբս մահ մոցրի աշխարհ:

ՄԻԱՅԼԱՅ.

Մայր իմ, մեր ողբն ու կոծը յանդիմանութիւն մի հա-  
մարիբ, չենք կարող դէմ դնել բնութեան:

(Ենօք մտնումէ):

## ՏԵՍԱՐԱՆ Թ.

## ԱՐԱՋԻՆՔ ԵՒ ԵԽՕՔ.

ԵՆՕՔ.

Մայր իմ Միհալայ, Արելն ինչո՞ւ է ընկած արիւնաշաղախ. սոսկումմեմ, ի՞նչ կերպարանափոխութիւն. ինչո՞ւ էք լալիս. մայրիկ, ի՞նչ արիւն է որ հոսումէ Արելի զլիից, միթէ զոհել էք և միթէ գառներ չըկացին զոհուելու:

ՄԻՀԱԼԱՑ.

Ո՞րդեսակ իմ, Աստուծոյ անարատ և ընտիր զոհ է եղել  
Աբել, բայց վայ գոհոցին . . .

ԵՐՈՔ.

Արեւն այլ ես չըպիտի՞ զարթնի. ո՞վ մեղ երդ պիտի սոր-  
վեցնե, ո՞վ մեղ ծաղիկ և պառուղ պիտի բերէ. (յայիս է):

ԱԴԱՄ.

(Թիրզայի թևը բռնելով քաշում է) Զարթիր Թիրզայ,  
զարթիր իմ սիրելի անզոյդ տատրակ, պէտքէ Աստուծոյ  
հրամանը կատարենք, Հողին յանձնենք այս հողը, որ ան-  
մահ չոգոյ բնակարան էր:

ԲՐԱՅԱՆ.

(Սթափուելով) Ի՞նչ մսիթարութեամբ լի մի թմրութիւն պատեց ինձ. Արէլ երկնային պայծառութեամբ ինձ մօտենալով գրկեց և ասաց. Թիրզայ, լաց մի լինիր, ես երջանիկ եմ, և դու էլ ինձ մօտ պիտի գաս, որ իմիասին Աստուծոյ փառաբանութեան երգը երգենք. Թողէ հայր իմ, վերջին միխթարութիւնս առնեմ, յաւիտենական քնոյ մէջ Արէլի հետ Աստուծոյ փառաբանութեան երգն երգելու և ի միամբն անպատռմ ինդութեամբ զուարձանայու. Աւր Արէլ,

այնտեղ և Թիրզայ, անբաժան Աստուծոյ արևը վայելեցին, անբաժան պէտք է շիրիմ մտնեն հող դառնալու. (Աբէլի գիւղի մօտ անշնչանումէ):

ԱԴԱՄ ԵՒ ԵՒԱՅ.

( Թիրզային կամենում են զարթնացնել ) Թիրզայ, Թիրզայ . . . . ո՞չ, աւաղ, կորուստնիս և ցաւերնիս կրկնապատկեցան։ Վայ մեղ, Սոխակն ու Վարդն միասին կորցրինք։ մեղ մնաց թշուառութիւն, սուգ և արժամածուր։

ՄԵԴԱԼԻ

Խղուկ, անմեղ եղբայր իմ Արել, սիրելի քոյր իմ Թիւ-

### (Վարագոյրը իջնումէ )



ՆԱԽԱՆՁ


Օձք և կարիճք իւրեանց թոյնով  
Ոչ իսկ գաղանք Ճիրաններով՝  
Տեն վնասակար քան զնախանձ  
Արիւնաբըռ և գիշախանձ

Զի չար նախանձ եղբայրադաւ  
Յաշխարհ էած զմահ կանխաւ.  
Անպարտ արիւն գառին անմեղ  
Եղբօր ձեռօք յելկիր եհեղ.

Անթիւ զոհեր միշտ նորանոր  
Հեն պակասած մինչև ցայսօր,  
Կայենական անգութ ձեռքով՝  
Աշխարհ ամէն ողողելով:

ԶՓեկիչն անդամ համայն աղանց  
Խմահ մատնեց այս չար նախանձ,  
Փոխան մնալոյ շնորհապարտ  
Խաչ բարձրացնց զանձըն անպարտ

Օ՞ն, թող կոչէի ի մենց նախանձ,  
Սէրն լինի մեր կրից սանձ,  
Սէր երկնային, սէր անախանձ  
Մեզ ամբարենք իւր անգին-գանձ,



Ինձանից անկախ պատճառաւու յետաձգուելով «ՀԱՅՈՎԱՐԴԵՐ» և «ՓԵԵՐ» գրքոյեկի հրատարակութիւնն, արժան համարեցի նորա փոխարէն սոյն ողբերգութիւնն ուղարկել մեծ պ. պ. բաժանորդաց՝ ինդրելով նոյա ներողամտութիւն:

Տպագրութեան պատրաստ է . ԳԵՈՒԳ Դ. ՀԱՅՐԱՊԵՏ  
ԵՒ ՆՈՐԱ ՍԻՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՔ , երկհատոր ընդարձակ  
աշխատասիրութիւնս , որոյ ծախուց օժանդակութեան  
համար առանձին յայտարարութեամբ դիմած եմ աղ-  
գայնոց ձեռնտուութեան , մեծայոյս գոլով որ ողջամիտ  
ազգայինք կը բարեհաճին օգնել ինձ լոյս աշխարհ հա-  
նել երջանկայիշատակ Հայրապետի մեծագործութիւն-  
ներն , որ փառք և պարծանք են ազգին և Հայաստան-  
եայց եկեղեցւոյն :

Սոյն երկհատոր աշխատասիրութեան մասին ընդարձակ տեղեկութիւն տուած եմ առանձին յայտաբարբառութեան մէջ. զիրքն զինի տպագրութեան արժէ 2 ր. 50 կոպ. բաժանորդագինն է 2 բուք:

8087

## ՏՊՈՒԽԾ ԵՆ

1. Համեստօն Քիրականութիւն (սպասուած է):
2. Քրիստոնէական վարդապետութիւն ընդարձակ, հանդիրձ  
վկայութեամբ Ա. Գրոց գին է 1 լութէ 20 կողէ:
3. Ըստդիմախոսութիւն Ա. Վարդանայ ընդ Վասակայ:
4. Գիշերդութիւն Ա. Վարդանանց զօրավարաց գին է  
60 կողէ:
5. Ողբերգութիւն Արելի գին է 20 կողէ և առաջարկութիւն առ Ա. Հանք համար առաջարկութիւն մշտական գումար ամենից ու Պատրիարքեան ՊԱՏՐԱՍ ԵՆ
1. Գեղրդ Դ. Հայրապետ և նարա սիրագործութիւնք:
2. Հայոց Ա. արքեր և Փշեր, այսինքն իսկզբանէ անտի Հայ  
ազգութեան կամ եկեղեցւոյ պաշտպանող և վնասող  
երելի Հայոց կենսագրութիւն և ապագայի տուած  
քորդ կամ էլլ պատկեր:
3. Համեստօն Քրիս Վարդապետութիւն, Գասագիրք լինե-  
լու յարմարութեամբ անդ մասնաւութիւն առաջ մասնաւութիւն:
4. Հրանգ ուսման հայոց լիզուել, յարչանակայ, բայ օ՛
5. Ողբերգութիւն Արքոց Ակոնդեանց:
6. Ողբերգ կամ եղերելի վախճան ուրացող Վասակայ:
7. Ողբերգութիւն Յովսեփայ գեղեցկի և Փառաւորութիւնն:
8. Կատակերգութիւն Սաւրի գիւղացի խաչագողների:
9. Կատակերգութիւն իմաստակ Վարժապետի, սուտ Բժշկի  
և Ագաչի:
10. Կատակերգութիւն Փաստաբանի:
11. Կատակերգութիւն բանտապետի:
12. Ազւասակ մշտականաւոր Օրացուցի:

Մեր Հայոցն է ի Վաղարշապատ Ա. Գուսակ:

20/3

